# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
## « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «23» 04. 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

Նախագահ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ.Կարապետյան,

անդամներ՝

ՀՀ ԶՈՒ ԻՇՎ Ս բաժնի պետ, գնդապետ Յու Եսայան

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության իզվ., քիմ, և հետախուզ. միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ.Գասպարյան

ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին <Յուտեկ> ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագիրը, պայմանագրի բարեխիղճ կատարման տեղեկանքը անհրաժեշտ է ներկայացնել նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ: Միաժամանակ բացակայում են պայմանագրի հաշիվ ապրանքագրերը(նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ): 23.04.2018թ. Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցին առաջարկվեց օրենսդրությամբ սահմանված ժամկետներում շտկելու անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում՝ 25.04.2018թ. <Յուտեկ> ՍՊԸ-ն ներկայացրել է նմանատիպ պայմանագրի, պայմանագրի բարեխիղճ կատարման տեղեկանքի և պայմանագրի հաշիվ ապրանքագրերի հայերեն թարգմանած տարբերակները՝ տրված լիազորված թարգմանչի կողմից և գրություն հետևյալ բովանդակությամբ՝ <Ընթացակարգի հրավերում բացակայում է հայտը միայն հայերեն լեզվով ներկայացնելու պահանջը: Փոխարենը ընթացակարգի հայտարարությամբ, ինչպես նաև <Գնումների մասին> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է հետևյալը <Հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն>: Ուստի ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ արդեն իսկ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին և շտկման ենթակա չեն:Այդուհանդերձ, գիտակցելով աշխատանքի հարմարավետությունը, կից ներկայացնում եմ հաշիվ-ապրանքագիրի, պայմանագրի և դրա պատշաճ կատարման փաստը հաստատող տեղեկանքի հայերեն թարգմանությունները՝ լիազորված թարգմանչի կատարմամբ>:

03.05.2018թ. Գնահատող հանձնաժողովը, քննարկելով մասնակցի ներկայացրած փաստաթղթերը, որոշեց հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին <Յուտեկ> ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը գնահատել հրավերի պայմաններին համապատասխանող:

Քանի որ 13.04.2018թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:Ի **Գիտություն՝ քանի որ <Յուտեկ> ՍՊԸ-ի հետ**

**կոնսորցիումով հանդես եկող <Հայ Էներջի> ՖԶԸ-ն հանդիսանում է ԱՄԷ ռեզիդենտ, ուստի վերջինիս մասով ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում չի կատարվել:**

1.2 **03.05.2018թ** Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <Յուտեկ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր .կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

---

(Տ.Աբրահամյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Հ.Կարապետյան |
| **Գնահատող** | Յու.Եսայան |
| **Գնահատող** | Տ.Գասպարյան |
| **Գնահատող** | Հ.Բարսեղյան |
| **Գնահատող** | Ա.Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ.Աբրահամյան |